№ 170 ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19 1898 ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19 № 170

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կիրակի օրը, սեպտեմբերի 20-ին

ԳՐԻԳՈՐ ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՄԵԳՈՒԻՆԵԱՆԻ

մահվան տարեդարձի օրը, ս. Նշան եկեղեցում կը մատուցվի պատարագ և կը կատարվի հոգեհանգիստ: Այդ մասին հանդուցեալի եղբայրը և քոյրերը յայտնում են ազգականներին և ծանօթներին: Պատարագի սկիզբը՝ 10 ժամին: 2—2
(«. շ.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ճահիճը նորից անշարժացաւ. Արմատական միջոց.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պետերբուրգից: Նամակ Աղուախից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գնդապետ Պիկարի գործը. Նամակ Շվեյցարիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Արդիւնաբերութիւն և գործարաններ:

ՃԱՀԻՃԸ ՆՈՐԻՑ ԱՆՇԱՐԺԱՑԱՒ

Մեր հաղորդած տեղեկութիւններից ընթերցողը գիտէ, որ վերջին ամիսներում ինչ որ նոր, տարօրինակ շարժում էր ըսկսվել Չինաստանի մէջ: Ծանր հարուածներից ցնցված երկնային պետութիւնը կենդանութեան թոյլ նշաններ ցոյց տվեց. երևան եկաւ մի կուսակցութիւն, որ կենքը ձեռքին վերանորոգութիւններ պահանջեց քարացած, գլուխը կորցրած կառավարութիւնից: Եւ այդ շարժումը, ըստ երևոյթին, սկսել էր մի թեթև մրրիկ յարուցանել լայնատարած ճահիճի մէջ: Նորերումս լուր տարածվեց, որ չինական կայսրը մտադիր է մի ճանապարհորդութիւն կատարել դէպի ծովեզերեայ քաղաքները, ուր մտադրութիւն ունի զննել երկրի զինուորական ոյժերը, նաւատորմը:

Դա մի ահագին, ցնցող նորութիւն էր երկնային պետութեան համար: Չինական անշարժութիւնը դարերից ի վեր սովորութիւն է դրել, որ երկնքի որդին չը պիտի հեռանայ իր պալատից: Եւ ահա՝ պապերի աւանդութիւնը համարձակվում էր ոտնակոխ անել այժմեան կայսրը, որոշելով՝ ո՛չ միայն ոտը պալատից դուրս դնել, այլ և մի ամբողջ ճանապարհորդութիւն կատարել: Իսկ չինական ժողովուրդը միայն նորութիւնների համար է անտարբեր, իբրև ապառաժ, խուլ ու կոյր. բայց երբ գործը վերաբերում է պապենական քաղաքիկ սովորութիւններին, դարերի փոշուն և անշարժութեան կուռքին, նա կարող է նոյն իսկ ամբողջ յեղափոխութիւններ առաջ բերել: Այդպէս էլ եղաւ այս անգամ: Հնութեան պաշտպանները հարկադրեցին երկնքի որդուն՝ չոքել իր խորթ մօր առաջ, հպատակութեան խոստում առնել և յանձնել երկրի կառավարութիւնը այդ 64 տարեկան պառաւին, որ առաջներում էլ մի քանի անգամ խնամակալուհի է եղել:

Այդպէս վերջացաւ այն վերանորոգչական շարժումը, որ արդէն հասել էր միապետի գահին: Եւ երկար ժամանակ գուցէ ոչ ոք չի յանդգնի ասել, թէ հարկաւոր է դուրս գալ՝ նոր օր, նոր կեանք տեսնելու համար. կայսերական պալատը խնամքով կը պահպանէ իր մէջ բանտարկվածին այն վնասակար հովերից, որ բերում են անիծած «բարբարոսները», այսինքն այն բոլոր մարդիկ, որոնք չինական ազգին պատանելու բախտից զրկված են: Մնում է սպասել, որ «անիծած բարբարոսները» աջ ու ձախ ճեղքեն այդ հոտած ճահիճը, մացնեն նրա մէջ աւելի մեծ խառնակութիւն, պատճառեն աւելի սաստիկ այրող ցաւեր: Գուցէ այն ժամանակ մի քիչ զգացուն դառնայ չինական կաշին:

Եւ այդ երևի անխուսափելի կը լինի, որովհետև անշարժութեան այժմեան ներկայացուցիչը՝ մայր-կայսրուհին փորձում է սաղմի մէջ խեղդել այն, թէև թեթև, բայց կենդանացնող շարժումները, որոնք սկսված էին երկնային կայսրութեան մէջ: Բայց բեակցիայի աջողութիւնը շատ կասկածելի է: Այն, ինչ կարելի էր կէս դար, քառորդ դար առաջ, անկարելի է այժմ՝ նոյն իսկ Չինաստանում: Բէֆօրմատօրների կուսակցութիւնը, ճշմարիտ է, կընկճվի, որովհետև հալածանքն անողոք է և կատաղի, բայց յեղափոխող ոգին, ժամանակաւոր ընկճումից յետոյ, դարձեալ երևան կը գայ, նորից կը պայթի, նորից գլուխ կը բարձրացնի, որպէս զի մի անգամ ևս ապացուցանի, որ առաջադիմութեան օրէնքները նոյնն են ամեն տեղ և ամեն ժամանակ:

ԱՐՄԱՏԱԿԱՆ ՄԻՋՈՑ

Ի՞նչ է անում մեզ մօտ հասարակութիւնը՝ իր անդամներին յանցագործութեան արատից ազատելու համար:—Ոչինչ: Մեզ մօտ յանցաւորին ուղղողը միայն բանտն է. յանցաւորի հետ գործ ունի միմիայն դատաւորը: Եթէ մէկը մի յանցանք է գործել, նա, ուրեմն, հասարակութեան մի անպէտք անդամ է, որից պէտք է երես դարձնել. միայն բանտը, խիստ պատիժները կարող են նրան խրատել. նորից վերադառնալ հասարակութեան մէջ յանցաւորը չէ կարող, քանի որ նա փչացած մարդ է: Այսպէս ենք դատում մենք: Մեզ համար դեռ գոյութիւն չունի ոճրագործութեան, այսպէս ասած, հոգեբանութիւնը. երբէք մենք չենք քննել այն պատճառները, որոնք գրգռում են մարդուն յանցաւորների շրջանը, բայց մանաւանդ երբէք չենք խղճացել նրանց: Ծեծել ընկածին—դա հին ասիական քաջագործութիւն է, որ յատուկ է ինքնօգնութեան, գաղափարից զուրկ բոլոր հասարակութիւններին: Բայց լուսաւորված ազգերի մէջ կան գեղեցիկ, խրատական փաստեր, որոնք ցոյց են տալիս, թէ յանցագործութիւնը այնպիսի անբուժելի ախտ չէ, որի դէմ կարելի չը լինէր որ և է միջոց գործադրել:

Նորերումս անգլիական կառավարութիւնը հրատարակեց հարուստ վիճակագրական տեղեկութիւններ բանտերի մասին: Թուականների ահագին կոյտի տակից նայում է այն մխիթարական երևոյթը, որ յանցանքների թիւը գնալով նուազում է, թէև ազգաբնակութիւնն աճում է անդադար, թէև տնտեսական պայմանները օր օրի վրա բարդ կերպարանք են ընդունում: Ինչի՞ց է առաջանում այդ երևոյթը, որով Անգլիան կարող է պարծենալ աշխարհի առաջ: Քննելով պատճառները, մենք հասնում ենք այն լուսաւոր, աշխարհաշէն ոյժին, որ կոչվում է հասարակական ինքնօգնութիւն: Դա այն դրութիւնն է, երբ գիտակցաբար գործող, իր չարն ու բարին լաւ հասկացող հասարակութիւնը չէ բաւականանում արտաքին, ձևական արդարութեամբ, իր խիղճը չէ հանգստացնում այն ստերէօտիպ խօսքերով թէ «ես ի՞նչ անեմ, կամ ի՞նչ իմ գործն է»: Հասարակական ինքնօգնութիւնը Անգլիայում չէ բաւականացել նրանով, որ եթէ կայ յանցաւոր, գոյութիւն ունի և օրէնք, որ բանտարկում, աքսորում է նրան: Ո՛չ, նա ինքն էլ միջոցներ է գործ դնում, որ յանցաւորների թիւը պակասի, որ որքան կարելի է շատ անհատներ դէջըվեն այն անողոք հանգամանքների ճանկից, որոնք ծնեցնում են ոճիրներ: Մենք տեսնում ենք որ հասարակութիւնը օրէնսդրութեան հետ ձեռք ձեռքի տված է գնում և այն՝ ինչ երբէք չէ կարող աջողեցնել պատիժը, խստութիւնը, շատ գեղեցիկ կերպով աջողեցնում է հասարակական գործունէութիւնը, որ մանաւանդ հոգ է տանում անչափահասի համար, այն հասակի, որ ամենից հեշտ է գլորվում մոլութիւնների վիհը և ամենից հեշտ է դուրս հանվում այդ վիհից: Մարդասիրութիւնը գործադրվելով լայն չափերով, քանդում, ոչնչացնում է խեղճութեան, դժբախտութեան որջերը, որոնք մի և նոյն ժամանակ յանցանքների դպրոցներն են: Իսկ երբ, այնուամենայնիւ, երևան են գալիս այնպիսի անհատներ, որոնք ոճրագործութեան բնական հակում ունեն, այդպիսիներին չեն ուղարկում բանտը, լաւ հասկանալով որ դա չէ կարող շտկել, ուղղել յանցաւորին, այլ տանում են արհեստաւորաց դպրոցները, յանցաւորների համար շինած յատուկ ապաստարանները և այնտեղ տարիների ընթացքում խելացի, մարդասէր վարմունքով և կրթութեամբ ազնիւ մարդ են դարձնում:

Գլխաւորն այն հայեացքն է, որ կազմվել է Անգլիայում յանցաւորների մասին: Որ սեփական ոչխարի բրդից իր կնոջ գործած գուլբանները մաշում, իր ձեռքով գործած զանազան գոյնի ներկած կտաւից ու շալերից հագուստ կրում, իր դառան մորթու գլակը ծածկում, իր ճվված ձէթը նաւթի տեղ վառում. մի խօսքով՝ ամեն բան ինքն էր պատրաստում. իսկ այժմ հանգամանքները փոխվել են, դիւղացին համարեա ոչնչով յետ չէ մնում քաղաքացուց. հագուստից սկսած մինչև տան ամենավերջին պիտոյքը՝ նա փողով է գնում: Ռուսաստանի գործարաններում պատրաստված չիթերը բոլորովին յետ են քշել մեր կտաւը. ռուս մուժիկի պատրաստած փայտէ խաղալիքներն անգամ մեր գիւղացին փողով է գնում: Շատ բարի, թող այդպէս լինի և այդ մի բնական ընթացք համարենք. բայց չէ՞ որ կեանքի մէջ փոփոխութիւն մտնելով և նորանոր պահանջներ առաջ գալով մարդերքների և պիտոյքների, շահագործում ևս պիտի առաջ գար: Տարաբաղդաբար այդպէս չի եղել. կեանքի փոփոխութիւնը առաջ է եկել անողորմաբար, անենսամալ կերպով. մեր կեանքի պիտոյքները մենք արդիւնաբերել, շահագործել չենք կարողանում, և այդ բոլորի համար գիմում ենք մեր երկրից դուրս՝ փողով բերելու, և այդպիսով մեր երկրի փողը դուրս է գնում. դա տնտեսական քայքայման զօրեղ պատճառն է:

Այս բոլորից յետոյ եզրակացութիւնն ակներև է: Մեր երկրի տնտեսական բարեկեցութիւնը դրութիւնը կախված է ոչ այնքան այդ երկրի բնական բերքերից, որքան այդ նոյն բերքերի արդիւնաբերութիւնից և շահագործութիւնից:

—

Անցնենք մի քանի կարևոր առանձին-առանձին փաստերին:

Ենթադրենք մի բոպէ, որ Կովկասը ներկայացնում է մի պարարտ երկիր խաղողի վազեր զարգացնելու գործում, և տալիս է այնպիսի խաղողի տեսակներ, որ հազուագիւտ են ուրիշ տեղերում: Վերցրէք, օրինակ՝ Երևանը: Բայց տեսնենք արդեօք այդ բերքը տալիս է մեր երկրին մի այնպիսի շահ, որը ստացվում է ուրիշ երկրներում: Ի տարկէ ոչ. խաղողի բերքով հարուստ Կովկասը, ոչ միայն թանկագին խմիչքները, ինչպէս են շամպայն, լէկէօր, մադէր, կոնեակ, այլ և հասարակ սեղանի գինին և օղին, Ֆրանսիայից ու Ռուսաստանից են ստանում: Մեր բնական գինին և օղին գերազանցում է շատերից, բայց արի և տես, որ Մոսկվայի յայտնի ֆիրմաների՝ Սմիրնովի, Շարիտէրի օղին և կոնեակն է մեր մէջ ծախվողը: Երևանում ապրողներից շատերը կրկնակի գին վճարելով գործ են ածում Կախէթի և Գանձակի գինին: Այս բոլորի պատճառն այն է, որ մենք մեր երկրի այդ բերքը շահագործել չենք կարողանում, պատրաստելու ձևը չը գիտենք և մինչև մեր փչանում, անտեղի ստաւվում է, Ֆրանսիայից և Ռուսաստանից ենք բերում թանկագին խմիչքներ:

Կովկասը հարուստ է զանազան կենդանիներով. մեծ քանակութեամբ կենդանու կաշիներ է տալիս մեր երկիրը, բայց որովհետև կաշիներ պատրաստելու գործարաններ մեր երկրում բացակայում են, այդ պատճառով ամեն տեսակ կաշիներ՝ կօշիկների համար՝ մենք բերում ենք

ցնել միմեանց այս ծայրերը: Վերջապէս ինչով բացատրել այն հանգամանքը, որ հարուստ Կովկասի մէջ ապրում է աղքատ ժողովուրդ, որ բնական բերքերով օժտված Կովկասի ժողովուրդը այժմ գտնվում է նիւթական նեղութեան մէջ:

Այս տխուր և մի և նոյն ժամանակ բարդ հանգամանք ներկայացնող հարցի պատասխանը՝ մեր կարծիքով հետևեալի մէջն է: Կովկասը զուրկ է գործարաններից, ժողովուրդը իր բոլոր պիտոյքները դրսից է ստանում, ամենաթանդ վճարով: Հիմնեցէք երկրի մէջ ամեն տեսակ գործարաններ և մեր ժողովրդի տնտեսական վիճակը կը սկսի բարւոքվել, որովհետև նա միաժամանակ երկու կողմից շահված կը լինի, նախ՝ գործ կը գտնի այդ գործարանների մէջ, և երկրորդ՝ այն ժամանակ, իր պիտոյքների համար նա աւելի քիչ կը վճարի, քան այժմ է վճարում:

Զարմանալի էլ չէ, որ հարուստ Կովկասի ժողովուրդը տնտեսական լաւ դրութեան մէջ չէ գտնվում: Մեր ժողովուրդը վաղուց արդէն դուրս է եկել նահապետական դրութիւնից. նա թողել է արդէն սակաւապետ կենցաղը և ապրում է բազմաթա՛ք, նոր պահանջներով, հետևապէս նրա համար բացվել է նորանոր ծախքերի դուռն, բայց մի և նոյն ժամանակ նրա արդիւնաբերութիւնը և նրա պարապմունքները նոյն են մնացել, նրա եկամուտների մէջ փոփոխութիւն չի մտել:

Մի քանի տասնեակ տարիներ առաջ մեր ժողովուրդը շատ քիչ բաներ էր դրսից բերում, այլ խօսքով՝ փողով գնում: Իր տաւարի կաշուց իր ձեռքով պատրաստած տրեխներն էր հագնում,

—

Բանասիրական

ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ

—

Երբ խօսք է լինում Կովկասի տնտեսական դրութեան մասին, միշտ մի և նոյն անմխիթար փաստն է կրկնվում, թէ մեր ժողովուրդը գտնվում է չքաւորութեան մէջ, թէ մեր երկիրը տառապում է նիւթական նեղ դրութիւնից: Վերցրէք մեր գրականութեան մէջ լոյս տեսնող յօդուածներն ու գրուածքները, որոնք նուիրված են մեր երկրի տնտեսական դրութեան. թերթեցէք մեր լրագրները, աչքի անցկացրէք նրանց մէջ եղած գաւառական անվերջ թղթակցութիւնները,—դուք նոյն բանը կը տեսնէք ամեն տեղ: Ամենքը միաբերան գանգատվում են մեր երկրի տնտեսական դրութիւնից և ամենքն էլ հաստատում են այն դառը իրողութիւնը, որ մեր երկիրը գնալով աղքատանում է, և ժողովուրդը աստիճանաբար նիւթապէս ընկնելով՝ չքաւորութեան դուռն է հասել արդէն: Բայց միւս կողմից Կովկասը—բնական հարստութիւններով օժտված մի երկիր է ճանաչվում. նրա հանքային և բուսական բերքերը հռչակ են վայելում ու Կովկասի մասին ընդհանրապէս այն կարծիքն է տիրում, որ դա մի հարուստ և արդիւնաբեր երկիր է. սակայն ինչպէս հաշտեցնել այս երկու հակասութիւնները և ինչպէս մոտենալ

Անցեալ մի քանի կարևոր առանձին-առանձին փաստերին:

Ենթադրենք մի բոպէ, որ Կովկասը ներկայացնում է մի պարարտ երկիր խաղողի վազեր զարգացնելու գործում, և տալիս է այնպիսի խաղողի տեսակներ, որ հազուագիւտ են ուրիշ տեղերում: Վերցրէք, օրինակ՝ Երևանը: Բայց տեսնենք արդեօք այդ բերքը տալիս է մեր երկրին մի այնպիսի շահ, որը ստացվում է ուրիշ երկրներում: Ի տարկէ ոչ. խաղողի բերքով հարուստ Կովկասը, ոչ միայն թանկագին խմիչքները, ինչպէս են շամպայն, լէկէօր, մադէր, կոնեակ, այլ և հասարակ սեղանի գինին և օղին, Ֆրանսիայից ու Ռուսաստանից են ստանում: Մեր բնական գինին և օղին գերազանցում է շատերից, բայց արի և տես, որ Մոսկվայի յայտնի ֆիրմաների՝ Սմիրնովի, Շարիտէրի օղին և կոնեակն է մեր մէջ ծախվողը: Երևանում ապրողներից շատերը կրկնակի գին վճարելով գործ են ածում Կախէթի և Գանձակի գինին: Այս բոլորի պատճառն այն է, որ մենք մեր երկրի այդ բերքը շահագործել չենք կարողանում, պատրաստելու ձևը չը գիտենք և մինչև մեր փչանում, անտեղի ստաւվում է, Ֆրանսիայից և Ռուսաստանից ենք բերում թանկագին խմիչքներ:

Կովկասը հարուստ է զանազան կենդանիներով. մեծ քանակութեամբ կենդանու կաշիներ է տալիս մեր երկիրը, բայց որովհետև կաշիներ պատրաստելու գործարաններ մեր երկրում բացակայում են, այդ պատճառով ամեն տեսակ կաշիներ՝ կօշիկների համար՝ մենք բերում ենք

իւրաքանչիւր ոճրագործ մարդկութեան համար անյոյս կորած մի թշուառական չէ, այլ կրթութեան, շտկվելու կարօտ մի մարդ, որին խորթ չեն մարդկային լաւ ձգտումները—այդ թէ՛ անգլիական օրէնսդրութեան և թէ հասարակական գործունէութեան անկիւնաքարն է կազմում: Բանտերը լոկ պատժի, սարսափների տեղ չեն, այլ ունեն իրանց կրթական շատ յատկութիւնները: Օրէնքը ներողամիտ է այն անձանց վերաբերմամբ, որոնք առաջին անգամն են յանցանք գործում. մեղմ, մարդասէր վարմունքը, մի հատ սրտագին խօսքը, խրատը աւելի լաւ են գործ տեսնում, քան տարիների շղթաներն ու տառապանքները: Եւ ահա՛ այդ բոլոր հանգամանքները, որոնք սկզբունք են թէ՛ հասարակութեան և թէ օրէնսդրութեան համար, առաջ են բերում այն ուրախալի երևոյթը, որ յանցաւորների թիւը պակասում է: Հասարակութիւնը մի ձևական մարդասիրութիւն չէ գործում միայն, այլ և՝ իրական, հաստատ օգուտներ է տալիս իրան՝ պակասեցնելով իր յանցաւոր անդամների թիւը:

Այդ օգուտները պէտք է ձեռք բերէ ամեն մի հասարակութիւն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

—

Սեպտեմբերի 7-ին

Պետերբուրգի հայոց եկեղեցում մի տեղ սովորութիւն մեզ վրա շատ վատ ազդեց. այդ գանձանակ պտըտեցնելն է: Ասում են որ մեր քահանաներին եթէ կանոնաւոր ռոճիկ տրվի, նրանք այլ ևս մուրացկանների այդ ձևերին չեն դիմի: Սխալ է դա: Ողորմութիւն ստանալու համար պարզվելու սովոր ձեռքը, ինչ դրութեան մէջ էլ լինի, էլի աչքը միշտ ձեր գրպանին պտի պահի: Ահա օրինակ: Պետերբուրգի եկեղեցին տասնեակ հազարների եկամուտ ունենալով, կարող էր, կարծում ենք, բաւականանալ դրանով և դէն գցել գանձանակ պտըտեցնելու տեղ սովորութիւնը, որին որքան էլ սովորած լինենք Կովկասում, կրկնակի տեղ է երևում այսպիսի տեղերում: Եւ ինչ է տալիս այդ գանձանակը: Հազիւ այդ օրը մի երկու երեք բուբլի հաւաքված լինէր. ուրեմն տարեկան մի քանի հարիւր բուբլի ողորմելի գումար: Վատ ազդեց մեզ վրա նաև եկեղեցու մէջ պտըտած ժամանակ՝ ծառայի գլուխ տալը եկեղեցին նոր ներս մտած նշանաւոր մարդկանց, այլ և ժողովականների իրար բարևելը եկեղեցում կանգնած միջոցին, և խօսելն ու ծիծաղելը: Ծառան իր յարգանքը աղաներին ուրիշ տեղ էլ կարող է յայտնել. իսկ այդ վերջիններն էլ իրանց «սոհբաթը» դուրսն էլ կարող են անել:

Եկեղեցու բակը լիքն էր ուսանողներով, մեծ մասամբ զարաբաղցիներ: Մօտեցանք մի խմբի. խօսում էին:

—Աղա, հիշտեղ իր էսքան վախտ ա—հարցնում է մէկը:

—Հէնի Գանձասարին ծմակներըմը:

—Բօ, բօ,—աւելացնում է առաջինը—դէ հէնա ասի առչ ըս տեռալ թամամ...

Մեր ականջները ծակում էր այդ խօսակցութիւնը, որքան էլ դա մեր հայրական գաւառաբարբառը լինէր: Ժամանակ է, որ մեր ուսանողները գոնէ դէն գցէին այդ ձևը և խօսէին մշակված կանոնաւոր գրական բարբառով:

Ա. Ա.

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

—

Սեպտեմբերի 11-ին

Մի երևոյթ, որ արժանի է այստեղ ուշադրութեան՝ դա մեր օրիորդների առաջադիմութիւնն է: Եթէ մենք համեմատենք նրանց այսօր և երեք տարի սրանից առաջ, մեծ տարբերութիւն կը գտնենք նրանց մէջ: Առաջ, օրիորդները ծխական ուսումնարան աւարտելով, մտնում էին կեանքի մէջ առանց մի որ և է նպատակի, խառնվելով ժողովրդի մէջ՝ շուտով իւրացնում էին նրա ձգտումներն ու հակումները... Այն ժամանակ դուք միշտ կարող էիք տեսնել մեր օրիորդներին «վեչերներում» ու «պիկնիկներում» տիկինների հետ լսօ խաղալիս, բամբասելիս... Բայց այլ են այսօր մեր օրիորդները: Առանց ուշադրութիւն դարձնելու ժողովրդի զանազան «ասէկօներին», նրանք սկսել են զանազան քայլեր անել: Առաջ օրիորդի համար բեմ դուրս գալը մի մեծ դժուարութիւն էր, բայց այս տարի մեր օրիորդներից մի քանիսը ուրախութեամբ դերեր վերցնելով՝ բեմ դուրս եկան, նոյն իսկ հակառակ իրանց ծնողների կամքին: Մարդ հիացմունքով է լսում, երբ նրանք խօսում են զանազան հարցերի մասին՝ թէ կարդացած գրքերից և թէ լրագրներից: Մի կողմից ինքնաճանաչութիւնը, միւս կողմից ժամանակի պահանջը՝ մեր օրիորդների համար անհրաժեշտութիւն են դարձրել ընթերցանութիւնը: Հայերէն գրքեր և «Մշակ» լրագիրը ձեռքից ձեռք է անցնում: Բայց սրանով մեր օրիորդները չը պէտք է հպարտանան, այլ աւելի մեծ եռանդով ու աշխոյժով պէտք է աշխատեն առաջ գընալ՝ իրանց զարգացնելու նպատակով: Հաւատացած ենք, որ եթէ այսպէս շարունակ պարապեն ընթերցանութեամբ և քիչ թէ շատ հետաքրքրվեն զանազան հարցերով՝ ժամանակի ընթացքում կը պատրաստեն իրանցից օգտակար մայրեր: Բայց, դժբաղդաբար, այն ժամանակ, երբ մեր օրիորդները առաջ են գնում, մեր երիտասարդները, քիչ բացառութեամբ, աւելի յետադիմում են: Չը կայ դեռ ևս նրանց մէջ այն ինքնաճանաչութեան զգացմունքը, որ ամեն մի անհատի համար հարկաւոր է:

Մ. Ե.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Այսօր, շաբաթ, սեպտեմբերի 19-ին Նորին Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայևիչ մեկնելու է Թիֆլիսից Բօրժոմ: Սեպտեմբերի 17-ին Նորին Բարձրութիւնը փոխադարձ այցելութիւն տվեց Վրաստանի էկզարխին և պետական խորհրդի անդամ բարոն Նիկօլային, որը Մեծ Իշխանի հետ միասին երկար տարիներ գործել է՝ նրա փոխարքայութեան ժամանակ: Ուրբաթ օրը, սեպտեմբերի 18-ին, առաւօտեան 10 ժամ 45 րոպէին Մեծ Իշխանը այցելեց Թիֆլիսի I իգական գիմնազիան, ուղեկցութեամբ կառավարչապետ իշխան Գօլիցինի, կառավարչապետի օգնական գեներալ Ֆրեղէի և ուրիշների: Աշակերտուհիների խումբը՝ ուսուցչական ժարմնի և կովկասեան շրջանի հոգաբարձու Եանովսկու հետ սպասում էին գիմնազիայի բակում: Այդտեղ էին եկել և II իգական գիմնազիայի բարձր դասատան աշակերտուհիները: Պատրաստական դասատան 7 տարեկան աշակերտուհի Սօկոլովսկայա ծաղկէ փունջ ներկայացրեց Մեծ Իշխանին, իսկ 9-րդ դասատան աշակերտուհի Կիդօեվա՝ իր մի ձեռագործ ծածկոցը: Գիմնազիայից Մեծ Իշխանը գնաց նոր շինած տաճարը: Պալատում նախաճաշելուց յետոյ Նորին Բարձրութիւնը այցելեց օրիորդական ինստիտուտը և ս. Նունէի օրիորդական դպրոցը, ապա դատաստանական նոր շինութիւնը: Նահանգական դատարանում և դատաստանական պալատի մէջ հաւաքված էին դատաստանական պաշտօնեաները, որոնք ներկայացան Մեծ Իշխանին: Երեկոյեան 9 ժամին Նորին Բարձրութիւնը գնալու էր նորաշէն մեծ թատրոնը տեսնելու: Երեկոյեան՝ քաղաքը նախորդ օրվայ նման լուսավառված էր:

—

Կ. Պոլսի լրագրներում կարդում ենք. «Պատրիարք Հայրը Պէօյուքէրէ գնաց և աւստրիական դեսպան բարոն Քալիչէի այցելութիւն տալով, ցաւակցութիւն յայտնեց Աւստրիայ Էլիզապէթ կայսրուհիին անակընկալ և աղեռալի մահուանը համար»:

—

Հայոց Կաթողիկոսի ճանապարհորդութեան մասին Շարուրից մեզ հաղորդում են. «Սեպտեմբերի 10-ին, ժամի 3-ին, Վեհափառ Կաթողիկոսը, իր ուղեկիցներով, Հին-Նախիջևանից եկաւ մեր գաւառը: Սահմանի վրա Վեհափառի գալստեան սպասում էին մօտակայ հայ և թուրք գիւղերի ներկայացուցիչները, հոգևորականութիւնը և կառավարութեան կողմից ոստիկանական պաշտօնեայ Մելիքով մի խումբ ձիաւորներով: Մօտենալով սպասողներին, Վեհափառը կանգնեցնել տվեց կառքը և օրհնեց ժողովրդին: Ճանապարհի վրա գտնվող հայաբնակ գիւղերում ժողովուրդը խմբերով սպասում էր Վեհափառին, և դիմաւորելով աղ ու հացով, խնդրում էր բարեհաճել իջնել իրանց գիւղում և քարոզել ժողովրդին. բայց, ինչպէս երևում էր, Վեհափառը սաստիկ շտապում էր: Բաշնորաշէնում դիմաւորեց Վեհափառին գաւառի կառավարիչ Ուխով իր պաշտօնակիցներով և ժողովրդի խուռն բազմութեամբ, և խնդրեց իջնել իր տանը, որտեղ վաղօրօք պատրաստութիւններ էին տեսել ընդունելութեան համար: Սեպտեմբերի 11-ին Վեհափառը մեկնեց այստեղից դէպի Երևան: Վեհափառը՝ իրան ցոյց տրված սիրալիր յարգանքի համար նուիրեց ռուսիկանութեան ներկայացուցիչ Մելիքովին մի ծխատուփ»:

—

Թիֆլիսում պօլիտեխնիկում քանալու հարցը նորանոր դժուարութիւնների է հանդիպում: «С. Пет. Вѣдомости» լրագիրն ահա ինչ է հաղորդում այդ մասին. «Մայրաքաղաքի մի քանի լրագրներում լուր տվվեց, արտատպված Կովկասեան լրագրներից, թէ երբ Պետերբուրգ վերադառնայ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան արդիւնաբերական դպրոցների բաժնի կառավարիչ Անոսով, վերջնականապէս պէտք է վճռվի Կովկասում պօլիտեխնիկում հիմնելու հարցը: Այդ առիթով մենք հնարաւորութիւն ունենք հաղորդելու, որ այդ լուրը այնքան էլ ճիշդ չէ: Անոսովի ուղևորութիւնը Կովկաս, ճշմարիտ է, վճռական նշանակութիւն ունեցաւ, բայց միայն Թիֆլիսում միջնակարգ տեխնիկական ուսումնարան հիմնելու հարցի վերաբերմամբ: Ինչ վերաբերում է Կովկասի պօլիտեխնիկումին, այդ խնդիրը դժուար թէ շուտով լուծումն ստանայ: Գլխաւոր արգելքը այս դէպքում այն հանգամանքն է, որ Կիէվում և Վարշավայում նորից երկու պօլիտեխնիկումներ բացված լինելով, ինչպէս և Պետերբուրգի, Մոսկվայի և Խարկովի բարձր տեխնիկական դպրոցների մէջ ընդունելութիւնը մեծացրած լինելով, ինժենէրական կրթութիւն ունեցող անձանց պետական պահանջը գոհացած պէտք է համարել բաւականաչափ. բացի դրանից ներկայումս դժուար է գտնել պրոֆէսորների և ուսուցիչների խումբ՝ նոր բարձր տեխնիկական դպրոցի համար: Հէնց այդ նկատումներով առժամանակ յետաձգված է և Օդէսայում տեխնօլոգիական ինստիտուտ հիմնելու հարցը»:

—

Այսօր, շաբաթ, սեպտեմբերի 19-ին, պրոֆէսոր Վ. Դ ո կ ու չ ա ե վ Գիւղատնտեսական ընկերութեան մէջ կը կարդայ մի զեկուցում Կովկասի հողի յատկութեան մասին: Զեկուցումը հիմնված է պրոֆէսորի սեփական հետազօտութիւնների վրա: Նիստին ներկայ լինելու հրաւիրված են բոլոր այն անձինք, որոնք հետաքրքրված են հողի դնահատման և հարկային սիստեմի խնդիրների քննութեամբ: Նիստը նշանակված է երեկոյեան ժամի 8-ին: Նիստին ներկայ լինել կարող են և կողմնակի անձինք:

—

«Արևելք» լրագիրը մի յօդուած նուիրելով դերասան Թուրեանին, վերջացնում է հետևեալ խօսքերով. «Դրեանցին համար բարեբաղդութիւն մը եղաւ Թիֆլիզ մնալը, ուր փառաւոր յուղարկաւորութիւն պիտի ունենայ: Միակ դառնութիւն մը կը պահէր իր սրտին խորը Կովկասի Հայերուն դէմ, որոնք մինչև վերջը յամառեցան Թուրեանց կոչել զինքը, հակառակ իր բողոքներուն. գուցէ շիրմին վրայ ալ այդպէս աղաւաղուած արձանագրեն Դրեանց անունը. բայց մահուան անկողնին մէջ ներած ըլլալու է անոնց, իր դուած համակրութիւններուն, միսիթարանքներուն, բայց մենք ունենք օրինակներ, որ հում նիւթը մերն է, իսկ նրա շահագործումը օտարինը: Պարզենք մեր ասածը: Մեր երկրում վաճառվող շատ ապրանքներ, որ մենք ստանում ենք օտար երկրներից, նրանց հում նիւթը մեր երկրի բերքն է: Օտարը մեր երկրի հում բերքը գնել տարել է հազարաւոր վերստեր, այդ բերքից ապրանքներ պատրաստել և կրկին մեր երկիրը ուղարկելով՝ մի քանի-պատիկ թանգ գնով կրկին մեզ վրա ծախել. բուրդը, շերամը, բամբակը այդ կարգի բերքերից են, մանաւանդ վերջինը—բամբակը, որի վրա առանձնապէս երկար պիտի կանգ առնենք, որովհետև այդ բերքի արդիւնաբերութիւնից շատ մեծ կախումն ունի մի մեծ նահանգի, ինչպէս է Երևանի նահանգի անտեսական վիճակը:

Երևանի նահանգը յայտնի է աւելի շատ իր բամբակի արդիւնաբերութեամբ, քան որ և է ուրիշ բերքով: Այն գաւառները, որոնք ընկած են դաշտային մասերում, ինչպէս են Երևանի, Էջմիածնի, Սուրմալուի, Շարուր-Դարալագեազի և Նախիջևանի գաւառները, հաւարեա մեծ մասամբ ծածկված են բամբակի պլանտացիաներով, որովհետև դրամի վերածելու տեսակէտից՝ այդ աւելի շահեր ունի, քան թէ միւս բերքերը՝ զատ-զատ: Սակայն բամբակի շահագործումը այնքան յետ է մնացել մեր մէջ, որ մեր ժողովուրդը այժմ իր ձեռագործ մի արշին կըտաւ անգամ չունի իր հագին: Աւելին կասենք. 10—20 տարի առաջ մեր գաւառներում բաւական չափով հասարակ կտաւներ էին պատրաստվում, որոնցից՝ զանազան գոյնի ներկելով, օրինակ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, ամեն տեսակ հագուստ էին պատրաստում և հագնում: Իսկ այժմ այդ էլ չը կայ. այդ միակ տնային աշխատանքը դադարել է, տեղական գործիքները բոլորովին վերջացել են և տեղի են տուել ֆաբրիկային գործուածքներին. մի խօսքով՝ հարիւր հազարաւոր պուդերով բամբակ մշակող Երևանի նահանգը այժմ նոյն իսկ մի արշին տեղական գործուածք չի կարողանում տալ, այլ այդ ահագին քանակութեան բամբակը բերվում է Երևանի շուկան, առնում են մի քանի տեղական վաճառականներ և մեծ մասամբ Մոսկվայի և Լօձիի յայտնի գործարանատէրերը ու տանելով այստեղից մինչև այդ քաղաքները, որոնք գտնվում են մեզանից հազարաւոր վերստեր հեռու, դրանից թել են պատրաստում, չիթեր, կտաւներ, կեղծ ժանուդներ, բամբակներ գործում, ներկում, և հէնց այդ ապրանքը կովկասցի կամ երևանցի վաճառականը գնելով՝ նոյն երկար ճանապարհներով կրկին մեզ մօտ է բերում ու մեր բամբակ մշակող գիւղացու վրա վաճառում: Բայց թէ ինչ վերադիրներով կամ քանի անգամ կըրկնապատկված գնով, այդ յետոյ կը տեսնենք:

—

Այժմ կարելի է մի այսպիսի հարց տալ. ինչ էք կարծում՝ մի պուդ բամբակը, որը արժէ մեզանում միջին թւով 7—8 բուբլի, Մոսկվա գնալով, այնտեղ զանազան չիթեր պատրաստվելով և կրկին մեր երկիրը վերադառնալով մի պուդ չիթը քանի է վաճառվում, եթէ մինչև անգամ հաշվելու չը լինենք ներկերը, կամ այն քանակութիւն բամբակը, որ Երևանի նահանգը արտադրում է, եթէ տեղումն էլ վերածվէր գործուածքների և չիթերի և ապա արտահանվէր, ինչ էք կարծում՝ քանի անգամ աւելի փող կը մտնէր մեր երկիրը, քան թէ այժմ է մտնում:

Հասարակ՝ 18 կամ 20 վերշօկանոց կտաւներից, հատ տեսակի, 200 արշինը կշռում է մի պուդ, իսկ բարակ տեսակից՝ 300 արշինը մի պուդ: Հատի արշինը վաճառվում է միջին գնով 15 կոպէկ, իսկ բարակինը՝ 10 կոպէկով: Ի՞նչ է դուրս գալիս. կտաւի պուդը մեզանում վաճառվում է 30 բուբլով. գիւլլի չիթի նեղ տեսակի 300 արշինը նոյնպէս մի պուդ է կշռում, և չիթի արշինը վաճառվում է 11, յաճախ 12 կոպէկով, ուրեմն գիւլլի չիթի պուդը վաճառվում է մեզանում 33—36 բուբլի: Այսպէս կարելի է վերցնել և հաշվել ամեն տեսակի գործուածքներ: Գործուածքների պուդը ընդհանուր առմամբ՝ մեզանում վաճառվում է 30 բուբլի, եթէ աւելին չասենք. բայց չէ՞ որ այդ մեր բամբակից պատրաստված գործուածքներն են, այն բամբակի, որի պուդը արժէ ընդամենը 7—8 բուբլի, այսինքն քառապատիկը: Մթէ գործուածք պատրաստելու ծախսը այդքան մեծ է...

Մի այլ հարց ևս: Եթէ մենք վճարում ենք գործուածքներին չորս անգամ աւելի, քան բամբակի գինն է, հետաքրքրական է իմանալ, ինչպէս է առաջ գալիս այդ: Այդ բանը բացատրելու համար կը բերենք մի քանի ստատիստիկական տեղեկութիւններ Մոսկվայի յայտնի գործարանատէր Սավվի Մօրօզովի գործարանի մասին հրատարակած գրքոյկից, որը կազմված է 1896 թ. Նիժեգօրոդեան համառուսական ցուցահանդէսի առիթով:

Սավվի Մօրօզովի գործարանը, որը միաժամանակ ունի թէ թել մանելու, թէ կտաւներ

թարանքներուն, մեծարանքներուն փոխարէն։ Քանիսներ, մեր շուրջը մնացած արուեստագէտներէն, պիտի յօժարէին այսքան զոհողութեան մը, եթէ գիտնային որ Շիշլիի կամ Սկիւտարի գերեզմանատան մէկ անկիւնը չպիտի կորսուէր իրենց հողակոյտը, ու զէթ պարզ տապանաքար մը պիտի ունենային»։

—

Պետերբուրգից Թիֆլիս է եկել երկրագործութեան մինիստրութեան մէջ ծառայող Ի. Մ ե չ չ ե ր ս կ ի, որ յանձնարարութիւն ունի ծանօթանալ Անդրկովկասում գտնվող գիւղատնտեսական դպրոցների և մասնաւորապէս Թիֆլիսի այգեգործական դպրոցի դրութեան հետ։ Պ. Մեչչերսկի յայտնի է և գրականութեան մէջ իր յօդուածներով՝ դպրոցական գործի մասին։

—

ՇԱՐՈՒՐԻՑ մեզ գրում են. «Սեպտեմբերի 6-ին, Բաշնորաչէնի հասարակութիւնը և ընդհանրապէս Շարուր-Դարալագեազ գաւառի ժողովուրդը մի ծանր կորուստ կրեց։ Վախճանվեց այստեղի հաշտարար դատաւոր Հայկ Տէր-Ամբակումեան, որ իր ծառայութեան առաջին տարվանից սկսած կարողացաւ գրաւել ժողովրդի ընդհանուր համակրութիւնը։ Լինելով այդ պաշտօնում 17 տարիներ, նա չը դարձաւ պեղծատ դատաւոր։ Նրա գլխաւոր զեկավարը իր խիղճն էր. նա անաչառ էր բոլորի համար, առանց ազգերի խտրութեան։ Հանգուցեալն այնպիսի ժողովրդականութիւն ստացաւ, որպիսին շատ քիչերին է վիճակվում ունենալ։ Եւ այդ է պատճառը, որ նրա վաղաժամ մահը ողբում էր թէ հայ, թէ ռուս, թէ թուրք, թէ հարուստ և թէ աղքատ։ Թաղման հանդիսին ներկայ էին ամբողջ գաւառի ծառայող դասը, համարեա բոլոր մօտակայ գիւղերի ներկայացուցիչները և հայ ու թուրք հոգևորականութիւնը։ Ժողովրդի ցանկութեամբ հանգուցեալի դագաղը՝ մօտակայ հայ գերեզմանատուն տանելու համար (որ Բաշնորաչէնից 5 վերստ հեռաւորութեան վրա է), կառք չը դրեցին, այլ ուսերի վրա տարան։ Հանգուցեալը թողել է իր անմխիթար կնոջը և ութ փոքրահասակ երեխաներին (որոնցից երկուսը սովորում են գիմնազիայում) շատ նեղ, անապահով դրութեան մէջ»։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են. «Ինչպէս լսում ենք, Թիֆլիսի նահանգապետից հրաման է եկել, որպէս զի կիրակի և տօն օրերին Ախալցխայի բոլոր խանութները առանց բացառութեան փակվեն, առաւօտեան ժամը 8-ից մինչև 12-ը։ Այս հարցը վաղուց է, որ արծածվել է մեր վաճառականների մէջ, բայց չը կարողանալով այդ մասին ընդհանուր համաձայնութիւն կայացնել, անցեալ տարի դիմեցին երկու խնդրագրերով նախկին և ներկայ նահանգապետ՝ Շերվաշիձէին և Բրկօվին։ Խնդիրը մինչև այսօր մնացել էր անհետևանք։ Այս վերջին օրերս, երբ նահանգապետ Բրկօվը կրկին այցելեց մեր քաղաքը, վաճառականներից մօտ 30 անձինք ներկայացան և խնդրեցին նրան՝ իրանց անցեալ տարվայ խնդրագրի իրագործումը։ Նահանգապետը խոստացաւ, որ շուտով կը կարգադրէ դրա մասին և ինչպէս ասացինք՝ արդէն հրաման ուղարկել է։ Ցանկալի է, որ մեր խանութպաւորները կիրակնօրեայ ազատութիւն ստանալով, այդ օրերին անձնատուր չը լինեն քէֆերի և այլ անբարոյականացնող վայելչութիւնների։ Ցանկալի էր, որ մեր վաճառականներն ու գործակատարները օրինակ չառնեն մեր արհեստաւորներից և ոմն օրերին փոխանակ գինետներ յաճախելու և հարբելու, աշխատեն հանգստանալ բարոյապէս և ֆիզիկապէս»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՆԴԱՊԵՏ ՊԻԿԱՐԻ ԳՈՐԾԸ

—

Սեպտեմբերի 9-ին, ինչպէս յայտնի է հեռագրներից, Պարիզի ոստիկանական դատարաններից մէկում քննվեց գնդապետ Պիկարի գործը։ Պիկարի վրա բարդված մեղադրանքն այն էր, որ նա, լինելով ընդհանուր շտաբի խուզարկու բիւրօի գլխաւոր, ցոյց էր տվել իր փաստաբան Լէբլուային ռազմիսի գաղտնի թղթեր, որոնք վերաբերում են երկրի պաշտպանութեան, իսկ փաստաբան Լէբլուա մեղադրվում էր այդ ճանապարհով իր խմացած գաղտնիքները ուրիշներին յայտնելու մէջ։ Վկայ էին կանչված Գոնզ, Պելիէ գեներալները, որոնք Զօլայի դատի ժամանակ այնքան աղմկալից ցոյցերի առարկայ դարձան և այնքան հիացմունք և ոգևորութիւն պատճառեցին Դրեյֆուսի և հռչակաւոր վիպագրողի հակառակորդներին։

Այժմ դատարանը բոլորովին այլ տեսարան էր ներկայացնում։ Շտաբի պաշտպան գեներալներն այս անգամ մոռացված էին և օրվայ հերոսը մեղադրվող գնդապետ Պիկարն էր։ Մի կարճ միջոցում որպիսի ահագին փոփոխութիւն։ Ինքնասպան Հանրիի գործած կեղծումը նոր հուսանք է առաջացրել ֆրանսիական հասարակութեան մէջ։ Մի օր առաջ դրականապէս յայտնի դարձաւ, որ դատարանը կարդարացնէ Պիկարին։ Սա մի սարսափելի հարուած կը լինէր ընդհանուր շտաբի համար. և ահա հանրապետութեան պրօկուրօրն շտապեց յայտնել Պիկարին դատող դատարանի պրօկուրօրին, որ զինուորական իշխանութիւնը նոր գործ է սկսել, որով գնդապետը մեղադրվում է մի կեղծ հեռագիր կազմելու մէջ և այդ յանցանքը պիտի քննէ զինուորական դատարանը։ Ուստի դատի օրը պրօկուրօրը պահանջեց, որ գործը յետաձգվի։ Պիկարին պաշտպանում էր փաստաբան Լաբօրի։ Մի գեղեցիկ, կրակոտ ճառի մէջ նա բողոքեց ընդհանուր շտաբի ագիտատօրների դէմ, որոնք տեսնելով, որ քաղաքացիական դատարանը պատրաստ է ազատութիւն տալ Պիկարին, փորձում են նորից հրապարակ հանել զինուորական դատարանը և անուանարկել Պիկարին։ Նա իր հանդարտ, արժանաւոր պերճախօսութեամբ պախարակեց մի քանի զինուորականների արարքները, նորից և նորից ապացուցեց, որ զօրքի պատիւը ոչինչ առնչութիւն չունի այդ անհատների գործերի հետ, որոնք կորցրել են ամօթի զգացմունքը։ Դահլիճում հաւաքված հասարակութիւնը չնչասպառ լսում էր տաղանդաւոր փաստաբանին. և երբ նա վերջացրեց, լսվեցան որոտալից ծափահարութիւններ։ Մեղադրվածները պահանջում էին, որ գործը չը յետաձգվի և իսկոյն քննվի։ Հանդիսականների յուզմունքը գագաթնակէտին հասաւ, երբ Պիկար վեր կացաւ և յուզված ձայնով ասաց.

—Այսօր ես գուցէ վերջին անգամն եմ խօսում հրապարակով։ Ինձ այսօր գուցէ կը փոխադրեն Շերշ-Միդի (զինուորական բանտ) գաղտնի քննութեան ենթարկելու համար։ Ինձ համար դժուար չի լինի արդարանալ հեռագիր կեղծելու գործում։ Բայց ես պիտի յայտարարեմ, որ իմ խիղճը հանգիստ է և ինձ համար կարիք չը կայ դիմելու Լիմերսիէ-Պիկարի թոկին (սա մի ագենտ էր, որին խեղդված գտան), ոչ էլ Հանրիի ածելին։ Ես ինքնասպանութիւն չեմ գործի, և եթէ ինձ անչնչացած գտնեն, իմացէք որ դա սպանութիւն է։

«Այդ անսովոր յայտարարութիւնից յետոյ տեղի ունեցածի նման բան ես չեմ տեսել, ասում է «Новости» լրագրի թղթակիցը։—Դահլիճը, կարծես ելեքտրականացած, թնդաց՝ «Կեցցէ Պիկար» աղաղակներից և ծափահարութիւններից։ Մոռացան թէ դատարանը, թէ այդտեղ կանգնած գեներալներն, մոռացան ամեն ինչ։ Ամենքը գտնվում էին այս անսովոր մարդու արած անսովոր ազդեցութեան տակ։ «Կեցցէ Պիկար»—լսվում էր դահլիճի մէջ, սանդուխքների վրա, բակում։ Հակասեմիտների կողմից մի քանի թոյլ աղաղակներ լսվեցան, որոնք կորան Պիկարին ողջունող ահագին ցոյցերի մէջ։ Դատարանում ամենքը սեղմում էին գնդապետի ձեռքը։ Իր մի քանի բարեկամներին նա ասաց. «Հարցը իմ անձին չէ վերաբերում. բայց այս արարքները մի-մի խայտառակութիւն են, որոնք ընկնում են մեր հայրենիքի վրա, ստորացնում են նրան աշխարհի առաջ»։

Պիկարի դէմ սկսած գործը վերջին, յուսահատական փորձն է, որ անում է ընդհանուր շտաբը այս մարդու լեզուն կապելու համար։ Ահա ինչ էր գրում յայտնի գործիչ և հռետոր Ժօրէս. «Ընդհանուր շտաբն արդէն շատ յանցանքներ է գործել։ Այս մէկը ամենամեծն է, որը մի և նոյն ժամանակ կը լինի ամենից ապարդիւնը։ Շտաբի մարդիկ գուցէ. մի բօպէ մոլորեցնեն հասարակական կարծիքը, բայց չեն խուսափի սարսափելի պատժից, որ անպատճառ կընկնի նրանց վրա»։

Օգտվելով իրերի խառնակ դրութիւնից, ֆրանսիական գահի թեկնածուներից մէկը, դուքս Օրլէանեան, մի շրջաբերական հրատարակեց, որ ուղղած է ֆրանսիացիներին և որի մէջ նա, շահագործելով այն մաշված, ծամծմած միտքը, թէ հայրենիքի թշնամիները ուզում են անպատվել զօրքը, ոչնչացնել նրան, հրաւիրում է բոլոր հայրենասէրներին դիմադրել այդ ապգակործան շարժման։ Բայց նոյն իսկ դուքսի կողմնակիցները խոստովանում են, որ դա մի անտակտ վարմունք է։

ՆԱՄԱԿ ՇՎԷՅՑԱՐԻԱՑԻՑ

—

Ժընէվ, սեպտեմբերի 8/20-ին

Ցանձինս Եղիսաբէթ կայսրուհու զոհվեց մի բարեսիրտ, ազնիւ կին, մի մեծ էնտուզիաստ։ Փառասիրութեան նշոյլ չը կար այս կնոջ մէջ։ Նրա սիրտը մի լայնածաւալ պետութիւն էր, որ պարունակում էր իր մէջ այն ամենը, ինչ որ վեհ է, բարձր, իդէալական... Մի ստոր, հոգով ու մարմնով փչացած արարածի ձեռքը միայն կարող էր բարձրանալ այսպիսի մի ազնիւ և մի և նոյն ժամանակ դժբախտ կնոջ վրա, որ իր կեանքում տեսաւ միայն վիշտ, նեղութիւն, սիրելիների կորուստ։ Ձեռք բարձրացնել մի թոյլ, անպաշտպան կնոջ վրա, որ դրականապէս ոչ ոքին վատութիւն չի արել—որքան ստոր գործ, որպիսի զայրելի վարմունք...

Շաբաթ օր, սեպտեմբերի 10-ին (նոր տօմարով) առաւօտեան, ըստ սովորութեան, կայսրուհին վաղ նախաճաշեց, ապա ժամը 11½-ին հիւրանոցից դուրս եկաւ շրջելու Ժան-Ժակ Ռուսսոի կղզին և մի քանի այլ արժանայիշատակ տեղեր, որից յետոյ կրկին հիւրանոց դարձաւ։ Երևի այդ ժամանակ յարմար առիթ չէր դտել եղեռնագործը՝ ի կատար ածելու իր դժոխային նպատակը։ Երբ նոյն օրը, ցերեկվայ ժամը 2-ից 10 բօպէ պակաս դէպի նաւամատոյց էր գնում նորին մեծութիւնը, «La Paix» հիւրանոցի առաջ իտալացի հրէշը, որ գողի պէս թաղնված էր ծառի ետևը, կայսրուհու վրա յարձակվեց և մի ակնթարթում պատառեց նրա կուրծքը։ Ուժգին հարուածից գետին տապալվեց վիրաւորը, նրան անմիջապէս ոտի կանգնեցրին նրա հետ գտնող տիկին Sztaray և հիւրանոցի բեռնակիրը։ Չը զգալով ամենևին վէրքի վտանգը և հասարակ գողի տեղ ընդունելով ոճրագործին, նա շարունակեց իր ճանապարհը, բայց չանցաւ մի քանի բօպէ, նա ուշագնաց եղաւ. ապա մի վայրկեան ուշքի գալով ուղղեց իր վարսերն ու գլխարկը և հարցրեց. «ինչ է պատահել»։ Այս նրա վերջին խօսքն էր 2 ժամ 20 բօպէին աւանդեց հոգին։ Բժշկական քննութիւնից երևաց, որ ՀԼասված է ձախ թոքը և ձախ սրտախորշը։ Այսպիսի հարուածը բօպէապէս մահ է պատճառում, բայց որովհետև սրտի վերքը շատ փոքր էր, այնպէս որ նորից փակվելով՝ թոյլ չը տուեց արեան՝ մեծ հոսանքով դուրս գալ, այլ արիւնը կաթիլ առ կաթիլ հոսելով, տարածվեց սրտի թաղանթի մէջ, որից սրտի գործունէութիւնը դանդաղելով, քիչ յետոյ վիրաւորը մահացաւ, առանց ցաւ զգալու։ Մահաբեր գործիքը սրածայր, եռանկիւնի, 11 սանտիմետրանոց մի խարտոց է, 6 սանտիմետրանոց փայտեայ կոթով։

Կայսրուհու եղեռնական վախճանը տխրութեամբ համակեց ամբողջ քաղաքը։ Բիրժան, խանութները, դրասենեակները, նոյն իսկ շատ արհեստանոցներ իսկոյն փակվեցին, առանց մէկի հրամանի։ Սեպտեմբերի 12-ին 40 հազարի չափ մարդիկ, երկու սեռի և ամեն հասակի, ժողովեցին «Beau-Rivage» հիւրանոցի առաջ, ցաւակցութիւն յայտնելու կայսերական տանից

գործելու և թէ ներկելու բաժանմունքներ, 1894—95 թուականի ընթացքում գործ է ածել 482,540 պուդ բամբակ։ Այդքան բամբակից պատրաստվել է 421,985 պուդ թել, որից 202,472 պուդից գործադրել է կտաւներ գործելու համար։ Այդքան թելից պատրաստվել են զանազան տեսակի գործուածքներ 30,000,000 արշին։ Իսկ մնացեալ թելը վաճառվել է թել մանելու բաժանմունք չունեցող այլ ֆաբրիկատօրներին։ Բացի դրանից պատրաստվել է 18,075 պուդ աստառացուների համար թերթաւոր բամբակ։ Այդ գործարանում նոյն թուի ընթացքում բանել են 16,700 բանւորներ, որոնց վճարվել է 2,935,000 ռուբլի ռոճիկ և 345,000 ր. պարգևներ, գումարը 3,280,000 ռուբլի։ 16,700 բանւորով բաւականացել է գործարանը այն դէպքում, երբ թելի կէս մասը առանց գործելու, նոյնութեամբ ծախվել է. հետևապէս՝ եթէ բոլոր թելը կամ ծախած կէս մաս թելն էլ գործվէր և ապա վաճառվէր, շատ պարզ է, որ այն ժամանակ բանւորների մեծ քանակութիւն կը պահանջվէր քան այժմ։ Ենթադրենք որ այդ աշխատանքի համար էլ հարկաւոր լինէր մի 5000 բանւոր, որոնց մօտաւորապէս՝ եթէ նոյն համեմատութեամբ վարձատրէին, պիտի վճարվէր դարձեալ 1,000,000 ռուբլի, ուրեմն 480,000 պուդ բամբակ մանելու և գործելու համար հարկաւոր կը լինէր 21,700 բանւոր 4,280,000 ռուբլի վարձով։ Եթէ ֆաբրիկատիրոջ վրա Մոսկվայում մի պուդ բամբակը նստի 9 ր., 480,000 պուդին պիտի վճարած լինի 4,320,000 ր. իսկ մի և նոյն տարում 4,280,000 ր. վճարել է բանւորներին, այլ խօսքով մօտաւորապէս բամբակի գնին հաւասար վճարել է և աշխատող ձեռքերին։ Հետևապէս մի պուդ բամբակը մանելու, գործելու և ներկելու համար վճարել է 9 ռուբլի։

Այստեղից կարելի է հետևեալ հաշիւը դուրս բերել. բամբակը մեզանում արժէ 8 ռուբլի. մի պուդ բամբակը սեղմելու, կապելու և մինչև Մոսկվա ճանապարհածախս արժէ 1 ր. 50 կոպէկ. մի պուդը մանելու, գործելու բանւորների վարձ 9 ր. մի պուդի համար ներկեր 3 ր., գործարանի այլ ծախսեր պուդին 1 ռուբլի, ֆաբրիկատիրոջ վաստակը 10% հաշվելով պուդին 3 ր., Մոսկվայից մինչև մեզ մօտ ճանապարհի և ապահովացման ծախսեր 1, 50 կոպէկ. երկրորդական ձեռքերի վաստակ 10 տոկոս հաշվելով՝ 3 ռուբլի։ Ուրեմն գումարը 30 ռուբլի։ Ահա թէ որտեղից և ինչպէս մեր 8 ր. արժեցող բամբակը մեզ նստեց 30 ռուբլի։

Եթէ Երևանի նահանգում հիմնվէր մի այնպիսի գործարան, ինչպիսին է Մոսկվայի Սավվի Մորոզովինը, կամ մի քանի փոքրիկ գործարաններ, այն ժամանակ մեր նահանգի արդիւնաբերած ամբողջ բամբակը, որը առատ տարին հասնում է 500,000 պուդի *), հէնց մեր երկրի մէջ կը շահագործվէր և կը պատրաստվէր չիթ և այլ գործուածքներ, նրա մի մասը կը սպառվէր տեղացիների մէջ, իսկ միւս մասը կարտահանվէր ոչ որպէս հում նիւթ։ Եւ այն ժամանակ մեր նահանգը կը մաներ ոչ թէ 500,000 պուդի փոխ, որը՝ 8 ռուբլով հաշված, կանի 4,000,000 ռուբլի, այլ առնուազն 3 անգամ շատ, այն է 12,000,000 ռուբլի, չը հաշված ճանապարհածախսերը և մի երկու այլ ծախսեր։ Հետևաբար՝ եթէ մեզանում հիմնվէին գործարաններ, ու մեր հագուստը այստեղ ձեռք բերէինք, նախ՝ մենք ազատված կը լինէինք անտեղի ճանապարհածախսերից, ազատված կը լինէինք այն աւելորդ վաստակներից, որ վերցնում են զանազան երկրորդական, երրորդական ձեռքեր, մի և նոյն ժամանակ, և որ ամենագլխաւորն է, մի 15—20,000 հոգի մեր ժողովրդից հաց կը գտնէին՝ բանելով այնտեղ։ Նոյն իսկ այն 4,000,000 ր. բանւորական վարձատրութիւնը, որ վճարվում է Մոսկվայում մեր արտահանած բամբակը շահագործելու համար, եթէ նոյն իսկ այդ գումարը մեր ժողովուրդը ստանար և մեր նահանգը մնաներ, այդքանն էլ բաւական էր՝ որոշ չափով մեր ժողովրդի տնտեսականը բարւոքելու։

—

Մենք ասեցինք, որ մեր բամբակի գործուածքների մի մասն էլ կարտահանվէր այլ կողմեր։ Եւ ահա ինչ հաշիւ։ Երևանում կան՝ թւով 8—10 վաճառականներ, որոնք Մոսկվայից ապրանքներ են բերում. նրանց ապրանքների քանակութիւնը հասնում է մօտաւորապէս 17,000 հակի, այսպէս՝

Ա.ֆրիկեանց.	3,500	Եղիազարեանց	3,000
Գէորգեաններ.	1,000	Ամիրեանց . . .	800
Բաբա. և Ենգ.	700	Ս. Աւետիսեան .	700
Բ. Աւետիսեան	500	Երկու պարսիկ .	2,000
Մնացեալները	1,550	Հին-Նախիջևան.	2,000
Գաւառները .	1,300		
		Ընդամենը	17,000

Իւրաքանչիւր հակը հաշվելով՝ միջին թւով 8 պուդ, կը ստանանք 136,000 պուդ։ Եթէ այդքան գործուածքի համար սպառվի ամենաշատը 175,000 պուդ բամբակ՝ տակը կը մնայ դեռ երկու այդքան բամբակ, որի գործուածքները կարելի է արտահանել մեր հարևան երկու երկիրները՝ Պարսկաստան և Թիւրքիա։ Այսպէս ուրեմն, ինչպէս էլ վերցնելու և քննելու լինենք, գործարանների նշանակութիւնը մեր երկրի համար շատ մեծ կը լինի և նրա տված օգուտը անուրանալի մեր ժողովրդի համար։

—

Վերջաբան. Մի երկրի տնտեսական բարւոքութիւնը կախված է ոչ այնքան այդ երկրի բնական բերքերից, որքան նոյն այդ բերքերի արդիւնաբերութիւնից և շահագործութիւնից։ Եթէ ուզում ենք, որ մեր երկիրը տնտեսապէս բարձրանայ և մեր ժողովուրդը դուրս գայ տընտեսական ծանր դրութիւնից, պէտք է մենք աշխատենք մեր երկրի մէջ զարգացնել շահագործութեան պայմանները, պէտք է հիմնենք ամեն կարգի գործարաններ, պէտք է մեր պիտոյքները մեր երկրի մէջ պատրաստենք և մեր ձեռքով հայթայթենք, այն ժամանակ միայն յոյս կարելի է ունենալ, որ մեր բնական բերքերով հարուստ Կովկասը կը սկսի ծաղկել։ Ահա այս գլխաւոր հանգամանքի վրա ենք դարձնում մեր երիտասարդ վաճառականների ուշադրութիւնը, որոնք խմբակցական ոյժերով կարող էին գործել, համոզված լինելով, որ գործարանների կարիքը շատ մեծ է մեր երկրի համար. նա կը տայ շահ թէ ձեռնարկողին և թէ մեր ժողովրդին։ Պէտք է նաև յիշել, որ եթէ տեղացիները չը ձեռնարկեն այդ գործին, օտարն է ձեռնարկելու։

Ց. Տէր-Մարտիրոսեան

*) „Памятная книжка Эриванской губерній на 1892 года“.

եկած աւստրիացի իշխաններին. իսկ ամսի 14-ին, առաւօտեան 8 ժամին, քաղաքի բնակիչները, կառավարութեան բոլոր ներկայացուցիչները և մի գունդ զօրք խորտակված սրտով ճանապարհ դրին իրանց սիրելի հիւրի անշունչ դիակը դէպի Վիէննա, ուր սպասում են սրտաբեկ ամուսինը—կայսր Ֆրանց-Յովսէֆ և սիրելի թագուհուց զրկված ժողովուրդը:

Ա. Տ. Ե.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Frank. Zeitung» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը, իբր թէ հիմնվելով ստոյգ տեղեկութիւնների վրա, հաղորդում է, որ չորս մեծ պետութիւնների խմբագրած ուլտիմատումը, որով առաջարկվում է Բ. Դրան յետ կանչել Կրետէից թիւրքայ զօրքը, սպառնալով, հակառակ դէպքում, դիմել բռնի զինուորական միջոցների,—առարկութեան է հանդիպել Ֆրանսիայի կողմից:

—«Matin» լրագիրը հաղորդում է, որ տարածված լուրերը, թէ Դրէյֆուսի dossier-ի մէջ գոկումենտներ կան, որոնք միանգամայն ապացուցանում են նրա մեղաւորութիւնը, բոլորովին հիմք չունեն: Ոչ մի գոկումենտի մէջ չը կայ Դրէյֆուսի անունը. նրանց ոչ մէկի մէջ նոյն իսկ ակնարկ չը կայ Վիլհելմ կայսրի՝ Պարիզի իր դեսպանի հետ ունեցած գրագրութեան մասին: Սմբողջ dossier-ն բաղկացած է բօրդերօից, որի հեղինակին պէտք է գտնի դատարանը:

—Բերլինից հեռագրում են, որ Բիսմարկի ժառանգներն առաջարկեցին Լէյպցիգի համալսարանին հանդուցեալի ձեռագրները՝ տեղաւորված 57 արկղների մէջ, բայց Սակսոնեան կառավարութիւնը հրաժարվեց ընդունել այդ ընծան:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պօլսի «Արևելք» լրագրի մի աշխատակիցը իր «քրոնիկներից» մէկը վերջացնում է հետեւեալ կերպով.

«Իբր վերջաբան այս քրոնիկին, կը յիշեմ անցած ամիս Պոլիս եկած երկու ռուսահայ օրիորդներ, որոնք հաղիւ երկու օր մնացին հոս և Բարիզ գացին: Անոնք երկու քոյրեր են, և երկուքն ալ արուեստ սորվելու համար կերթան Ֆրանսայի ոստանը: Մեծը կերթայ մտնել Բարիզի երաժշտանոցը, կրտսերը կերթայ սորվիլ նկարչութիւն: Արուեստի նուիրված դեռահաս երկու հայ աղջիկներ, որոնց հայրն ու մայրը Թիֆլիզի զարգացած դասակարգին զարդերն են իրաւամբ: Անոնց հայրը Տոքթոր Աղէքսանդր Պապայեանն է (խեղճ Բաբայեան), համալսարանական ազնիւ Հայ մը, որուն վրայ Թիֆլիզին դարձողները մեծ գովեստներով կը խօսին: Իր կինը Կովկասի հայոց առաջին մանկապարտիզպանուհին եղած է, և, թէև նիւթական կարողութեան տէր, Զուլեբիա ունէր յետոյ մանկավարժութիւն, Թիֆլիզ եկած և մանկապարտէզ հաստատած է առաջին անգամ: Կը պատմվի, թէ Տոքթոր Պապայեան երբ կը նշանվի իր կնոջ, Տիկին Պապայեան հայերէն չը գիտէ եղեր: Տոքթորը պայման դրեր է որ հայերէն սորվի, և այն առեն միայն կամուսնանայ անոր հետ, երբ խօսելալը կարող կըլլայ հասկնալու Ալիշանի հանրածանօթ մէկ երկը՝ աշխարհաբար գրուած: Եւ այսօր այդ հայ ընտանիքը Թիֆլիզի բարեկեցիկ հայ ընտանիքներուն մէջ եզական դիրք մը ունի, սա պատճառաւ, որ բոլոր անդամներն ալ լաւ հայերէն գիտեն»:

Գեղեցիկ են կ. պօլսեցի քրոնիկեօրի զգացմունքները, ափսոս միայն՝ որ նրա գրածի մի քանի կէտերը Թիֆլիսում միայն ժպիտ պիտի յարուցանեն...

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ, 18 սեպտեմբերի: Թագուհին վախճանվեց խաղաղ, ներկայութեամբ՝ թագաւորի, թագուհի կայսրուհի Մարիա Ֆեոդորովնայի, յունայ թագաւորական զոյգի, Ուէլսի իշխանուհու և այլ մերձաւորների: Թագաւորը հրամանագրեց դադարեցնել բոլոր հասարակական ուրախութիւնները մինչև հոկտեմբերի 4-ը:

ԲՈՒԴԱ-ՊԵՇՏ, 18 սեպտեմբերի: Օրշօվում ձերբակալվեց մի մարդ, որի դէմ շատ կան ապացոյցներ այն մասին, թէ նա մտադիր էր սպանել Ռումինիայի թագաւոր Կարլին: Նրա մօտ գտան կեղծ անցագիր, մի սրուակ թոյն, դաշոյն և ուրիշ զանազան զէնքեր:

ՊԱՐԻԶ, 18 սեպտեմբերի: «Ergaro» ասում է, որ եթէ վճռաբեկ ատեանի զեկուցանողը կը պահանջի լրացուցիչ քննութիւն կայացնել, այն ժամանակ գործը կը վերանորոգվի ամբողջութեամբ և վճիռը շուտ չի յայտարարվի: Արդարադատութեան մինիստրութիւնը յոյս չունի, որ գործը յունվարից վաղ վերջանայ: Ընդհանուր պրոկուրօրն ասել է, որ գործը չի կարող յանձնվել վճռաբեկ ատեանին հոկտեմբերի վերջից աւելի վաղ:

ԼՕՆԴՕՆ, 18 սեպտեմբերի: «Times»-ին հեռագրում են Պեկինից, որ կայսերական յայտարարութեամբ,—որի մէջ վիշտ է յայտնված կայսրի շարունակվող հիւանդութեան մասին, նահանգապետները հրաւիրվում են ուղարկել Պեկին ամենալաւ բժիշկներին:

«Times»-ին հաղորդում են Հօնկօնգից. «Կանիմէյի ընտանիքը սեպտեմբերի 26-ին փախաւ Մակաօ: Չը նայելով բազմաթիւ մահվան պատիժներին, Կվան-Սուի ապստամբութիւնը սաստկանում է»:

ՊԱՐԻԶ, 18 սեպտեմբերի: Ռուսաց Կայսերական Զոյգի Պարիզ այցելելը յաւէրժացնելու համար՝ ֆրանսիական կառավարութիւնը պատուիրեց նկարիչ Բօլլին մի մեծ պատկեր, որը ներկայացնէ Ալէքսանդր III-ի կամուրջի հիմնարկութիւնը: Այդ նշանաւոր աշխատութիւնը աւարտված է, և կը զետեղվի Վերսայլի մուզէյի մէջ»:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար № 1 գնացքը դուրս է գալիս ԲԱԳՈՒԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ ցերեկվայ 4 ժամին և 5 րօպէին: Թիֆլիս է հասնում առաւօտեան 8 ժամ 26 րօպէին: Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ առաւօտեան 9 ժամ և 10 րօպէին: Բաթում է հասնում երեկոյեան 8 ժամ և 47 րօպէին:

Մարդատար № 3 գնացքը դուրս է գալիս ԲԱԳՈՒԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ դիշերվայ 12 ժամ 20 րօպէին. Թիֆլիս է հասնում երեկոյեան 6 ժամ և 33 րօպէին: Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ՝ երեկոյեան 7 ժամ 48 րօպէին. Բաթում է հասնում առաւօտեան 8 ժամ 28 րօպէին:

Մարդատար № 2 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ առաւօտեան 8 ժամ 20 րօպէին: Թիֆլիս է հասնում երեկոյեան 8 ժամ 22 րօպէին: ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս՝ երեկոյեան 9 ժամ 5 րօպէին: Բագու է հասնում ցերեկվայ 12 ժամ 59 րօպէին:

Մարդատար № 4 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ երեկոյեան 8 ժամ 35 րօպէին: Թիֆլիս է հասնում առաւօտեան 9 ժամ 7 րօպէին: ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս առաւօտեան 10 ժամ 57 րօպէին: Բագու է հասնում առաւօտեան 5 ժամ 45 րօպէին:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց հիւանդ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—1¼—2¼ ժ. ներքին և միասեռական հ. ականջի, կոկորդի և քթի հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՁԷ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Ն. ՇՊԱԿՈՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.

Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՈ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խլխի, արեան, կղմի և այլն:

Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝

23—150 Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Լոյս տեսաւ

Գ. ԷԲԵՐՍԻ

ՄԱՐԴ ԵՄ

(Homo sum)

Վէպը: Գերմաներէն բնագրից թարգմանեց

Ստ. Մալխասեանց

428 երես: Գինը 1 ռուբլի: Դիմել՝ Тифлисъ. Армянское Издательское Общество.

(չ. շ.) 17—20

Լոյս տեսաւ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱԼԽԱՍԵԱՆԻ

«ՀՕՐՈՏ-ՄՕՐՈՏ»

(Պատկեր իրական կեանքից)

ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ

Գինն է 30 կոպէկ

Դիմել ուղղակի գրավաճառանոցներին:

5—7 (ե. հ. շ.)

ՎԱՃԱՌԱՀԱՆՎԵՑ ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ ՎՆԱՍՎԱԾ ՀԱՅԵՐԻՆ

ԵՐԿՐՈՐԴ, ՆՈՐԻՑ ՄՇԱԿՎԱԾ ԵՒ ԼՐԱՑՐԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳԻՆԸ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍՈՎ, 3 Ր. 70 ԿՈՊԷԿ

2-ое вновь обработанное и дополненное изданіе *ЛИТЕРАТУРНО-НАУЧНАГО СБОРНИКА*

„БРАТСКАЯ ПОМОЩЬ ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЦІИ АРМЯНАМЪ".

Въ настоящее удешевленное изданіе, содержащее болѣе 140 статей разнообразнаго содержанія въ прозѣ и въ стихахъ, вошло болѣе 40 новыхъ, знакомящихъ съ одной стороны съ ужасающими бѣдствіями турецкихъ армянъ, а съ другой—съ бытовыми и культурными условіями жизни армянъ въ прошломъ и въ настоящемъ. Къ книгѣ приложены двѣ отдѣльныя большія группы (болѣе 100 человѣкъ) армянъ-переселенцевъ, снятыя съ натуры, а также болѣе 150 рисунковъ (40 новыхъ), въ томъ числѣ многіе въ цвѣтныхъ краскахъ и два: „Рѣзня армянъ въ Требизондѣ 1895 г." И. К. Айвазовскаго и „Весенняя буря" Магдесіана, въ три тона.

Цѣна 3 р., съ пересылкой 3 р. 70 к.

Складъ въ конторѣ *Русскихъ Вѣдомостей* и въ книжн. магаз. Карбасникова на Моховой.

NB. Лица, не окончившія счетовъ по 1-му изданію «Братской помощи», благоволятъ поспѣшить окончаніемъ таковыхъ.

Покорнѣйшая просьба къ изданіямъ, сочувствующимъ цѣли сборника, перепечатать настоящее объявленіе.

3—10 Завѣд. ред. Гр. Джаншіевъ.

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէյլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 30 սեպտեմբերի (12 հոկտեմբերի) ԱՆԱՏՕԼԻ շոգենաւը, նաւապետ ԲԻԱՆԿԻ: Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, մաքը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօվին, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիոնի փող. նախկին Արծրունու քարվանսարա: ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլդարեանին, Կոլիբեակինսկայա հրապարակ: ՆՈՎՈՐՈՍՍԻՅՍԿ—պ. Մելիսիոր Հերշենզոնին: (ե. հ. շ.) 18—20

Մ. Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆՑԻ ԴՊՐՈՑՈՒՄ

Ընդունվում են տղաներ արքունական միջնակարգ ուսումնարաններ մտնելու համար: Ընդունվում են և դիշերօթիկներ: Ուսումնարանը գտնվում է Սօլոլակում, Սադովայեա փողոց, գնդապետ Սահակեանցի տանը, № 54. (ե. հ. շ.) 8—8

ԶԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂԾՈՒՄՆԵՐԻՑ

AVVAC

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ինչպէս տանտէրերին, նոյնպէս կենդանիներին առաջարկվում է նոր միջոց՝ մեր հնարած՝ ԹՈՆԱՒՈՐԵԱՆ ԴԷՄ, որը 5 օրվայ մէջ չորացնում է տան պատերը: Ծախում եմ բոլորովին պատրաստի. ամենքը կարող են առանց վարպետի՝ հեշտութեամբ գործածել: Սովորեցնում եմ ձրի ապէս: Առաջվանից լաւ պատրաստած լինելով՝ այժմ աւելի շուտ է չորացնում և կարելի է պահել մինչև մի տարի, չի փչանայ: Դրա համար ունեմ վկայական թղթեր: Ընդունում եմ ամեն տեսակ մալեարնի գործ: Պատուէրները կատարում եմ փութապէս և բարեխղճութեամբ: Հասցէն. ТИФЛИСЪ, Оминская ул. 1-й уч. д. Меликъ-Азарянца, Заводъ красокъ П. Нерсесянца, А. Аракелянцъ. (չ) 3—3

Ֆիլանսների միլիատրի թողտուութեամբ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова).

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական-առևտրական. կրթութիւն և պատրաստել հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատեստատներ: Կուրսերում ուսանվում են՝ 1) Առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն տարբերի վրա. 2) Հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղումն ձեռագրի:)

ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ՍԿՍՎՈՒՄ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-ից:

Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում և Եղբ. Ծովհաննեան և ընկ. ԲԱԳՈՒԻ բաժանմունքում: Օտարաքաղաքացի ունկնդիրների յարմարութեան համար կուրսերում ընդունվում են դիշերօթիկներ: Կուրսերի կանոնագրութիւնը (уставъ) և ժամանակացոյցը—տրվում են և ուղարկվում են ձրիաբար: Օտարաքաղաքացիները դիմում են կուրսերի հիմնադրին՝ БАКУ, А. И. Теръ-Каспарову,

(հ. շ.) 20—25

Քաղաքից շուտով հեռանալու պատճառով

Զափաւոր գնով կանաչադոյն, խօսող թութակներ են ծախվում: Նոյն տեղում ցանկանում են գնել Կովկասեան վայրի կենդանիներ, այն է՝ եղջերուներ, վայրի այծեր, քարայծեր, կրխտաներ և վայրի ոչխարներ: Հասցէն՝ Միքայէլեան փողոց, № 106, տուն Բարամովի, բակում

8—12 ՀՈՒԳՕ ՎԻՆԿԼԷՐ

Дозволено цензурою, Тифлисъ, 18 Сентября 1898 г. Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13